ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀՏԴ 330.55
DOI 10.56246/18294480-2022.12-23

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ
ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դասախոս,
ԳՊՀ կառավարման և ֆինանսների ամբիոնի ասպիրանտ
էլփոստ՝ kor.gevorgyan@gmail.com

Արդյունաբերությունը Հայաստանում ավանդաբար հանդիսացել է տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը: Արդյունաբերությունը տնտեսության այն ոլորտն է, որի վիճակով Հայաստանի անկախացման օրվանից մտահոգված են եղել թե՛ ՀՀ կառավարությունը, թե՛ ժողովուրդը: Սակայն միանգամայն ակնհայտ է, որ Հայաստանն ինդուստրիալ ուղղվածություն ունեցող երկիր դարձնելու քաղաքականությունը պահանջում է կառավարման ժամանակակից մոդելների, ինովացիոն համակարգերի ներդրում՝ արդի, մրցունակ տեխնոլոգիաների կիրառման, ինչպես նաև մարդկային կապիտալի շարունակական զարգացման ապահովմամբ:

Ուստի Հայաստանի Հանրապետությունում տարբեր ժամանակաշրջաններում ձևավորված բոլոր կառավարությունների գործունեության հիմնական նպատակներից մեկը հանդիսացել է արդյունաբերական հստակ քաղաքականության և անհրաժեշտ գործիքակազմերի ձևավորումը՝ մշակող արդյունաբերության ճյուղերի և համալիրների զարգացման թիրախավորմամբ: Այս նպատակով 2009թ. մշակվել է ՀՀ արդյունաբերության զարգացման հայեցակարգի նախագիծը, որտեղ սահմանվել են ՀՀ արդյունաբերության զարգացման նպատակները, խնդիրները և գերակայությունները, որոնց իրականացումը նպատակ ուներ ստեղծել հանրապետության արդյունաբերության հետագա զարգացման նախադրյալներ՝ այն ինտեգրելով համաշխարհային արդյունաբերությանը, ինչպես նաև խթանել ներքին և արտաքին շուկաների արդի պահանջներին համապատասխանող մրցունակ ապրանքների արտադրությունը:

Բացի դրանից, ելնելով տնտեսության մրցունակության բարձրացման և շարունակական ներառական տնտեսական աճի ապահովման

նպատակադրումներից, ձևավորվել է ՀՀ-ում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականությունը:

Բանալի բառեր՝ *համախառն ներքին արդյունք (ՀՆԱ), արդյունաբերություն, մշակող արդյունաբերություն, հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում, աճ, տեսակարար կշիռ, տնտեսավարող սուբյեկտների քանակ, արտադրողականություն:*

2011 թվականի դեկտեմբերի 15-ին ՀՀ կառվարության հավանությանն է արժանացել «Հայաստանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության[1]» շրջանակներում, ի թիվս այլ ռազմավարական նպատակային ցուցանիշների, որպես թիրախ է սահմանվել նաև մշակող արդյունաբերության արտադրողականության իրական աճի ապահովումը:

Իսկ արդեն 2013 թվականից սկսած՝ յուրաքանչյուր տարի ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատվում է Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված իրականացվող պետական աջակցության ծրագիր[2]՝ մշակող արդյունաբերության ուղղություններով:

Բացի վերոնշյալից, պայմանավորված արդյունաբերության ոլորտի զարգացման ապահովմամբ և ելնելով 2019 թվականի ՀՀ կառավարության ծրագրից և «Արդյունաբերական քաղաքականության մասին» ՀՀ օրենքից, 2019 թվականին ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել է և e-draft.am կայքում հանրային քննարկման է ներկայացվել ««Արդյունաբերության քաղաքականության ռազմավարությանը եվ միջոցառումների ծրագրին

---

[1] ՀՀ կառավարության 2011 թ. դեկտեմբերի 15-ի նիստի N 49 արձանագրային որոշմամամբ հաստատված հավելված «Հայաստանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն»

[2] ՀՀ էկոնոմիկայի նախարարի 24.02.2020թ. N278-Ա հրաման «Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների ցանկը, բյուջեն և կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի մասնակցության աջակցության ենթակա համաֆինանսավորվող ծախսերի տրամադրման կարգը հաստատելու մասին», ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայք էջ՝ https://www.mineconomy.am/edia/10862/hraman%20278.pdf

հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը[3]», որը, սակայն, մինչ օրս դեռևս չի հաստատվել ՀՀ կառավարության կողմից: Նոր փաստաթղթի մշակման հիմքում ընկած է իրականացվող բարեփոխումների արդյունավետ իրագործման, ինչպես նաև բարեփոխումների հիմնական ուղղությունների և դրանցից ակնկալվող արդյունքների ձեռքբերման, առաջընթացի չափելի ցուցանիշների սահմանման անհրաժեշտությունը:

Այնուհետև ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշման հավելվածով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագիրը[4]», որը արդյունաբերության ոլորտի զարգացմանը և երկարաժամկետ մրցունակության ապահովմանն ուղղված միջոցառումները սահմանող միակ գործող պետական փաստաթուղթն է հանդիսանում ներկայումս:

Վերոնշյալ փաստաթղթում երկարաժամկետ տնտեսական աճի ներուժի ապահովման և արդյունաբերության զարգացմանն ուղղված միջոցառումների տեսանկյունից հիմնականում թիրախավորվել է մշակող արդյունաբերությունը: Մասնավորապես մշակող արդյունաբերության միջազգային մրցունակության բարելավման նպատակով նախատեսվում է համալիր միջոցառումների իրականացում՝ միտված ձեռնարկությունների տեխնոլոգիական վերազինմանը, միջազգային նոր շուկաներ ներթափանցմանն ու առկա դիրքերի ամրապնդմանը, ինչպես նաև բարձրորակ կադրերով մարդկային ռեսուրսների առկայության ապահովմանը:

Փաստաթղթում ձևակերպված են մշակող արդյունաբերության զարգացմանն ուղղված պետական քաղաքականության հետևյալ 4 նպատակադրումները[5].

✓ ապահովել Հայաստանի մշակող արդյունաբերության միջազգային մրցունակության շարունակական աճը,

---

[3] «Արդյունաբերության քաղաքականության ռազմավարությանը եվ միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, https://www.e-draft.am/projects/2237

[4] ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշման հավելված, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագիր», https://www.gov.am/files/docs/4586.pdf

[5] ՀՀ կառավարության թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշման հավելված, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագիր», էջ 29

✓ զգալիորեն ավելացնել արտահանելի արտադրանք ստեղծելու ներուժ ունեցող մշակող արդյունաբերության ձեռնարկությունների զարգացմանն ուղղված միջոցառումների ֆինանսավորումը՝ գալիք 5 տարիների ընթացքում տրամադրելով առնվազն 80 մլրդ դրամ՝ համաձայն կառավարության սահմանած միասնական կանոնների,

✓ հիմնել 3 արդյունաբերական գոտի և զարգացնել արդեն իսկ գործողները՝ ապահովելով ենթակառուցվածքների և միջավայրի գերազանցություն,

✓ քայլեր ձեռնարկել Հայաստանի արդյունաբերականացման ուղղությամբ և հնարավորինս երկարացնել արտադրական շղթան, խթանել առավել բարդ և բարձրարժեք արտադրանքի թողարկումը:

Նշված նպատակներին հասնելու համար ՀՀ կառավարության կողմից սահմանվել են հետևյալ թիրախները[6]՝

❖ մշակող արդյունաբերության դերը ՀՆԱ-ի մեջ հասցնել առնվազն 15%-ի,

❖ միջնաժամկետ հատվածում տնտեսական բարդության ցուցանիշը - 0.39-ից հասցնել 0.1 միավորի և ստեղծել հիմքեր՝ 10 տարվա ընթացքում դասվելու բարձր տնտեսական բարդություն ունեցող երկրների շարքին: Կառավարությունը քայլեր է ձեռնարկելու ապրանքների արտադրության արժեշղթաների խորացմանը նպաստելու ուղղությամբ, որը ենթադրում է տեխնոլոգիապես առավել բարդ ու բարձր հավելյալ արժեք ստեղծող արտադրանքի և արտադրական գործընթացների առկայություն:

ՀՀ կառավարության կողմից արդյունաբերության ոլորտում սահմանված վերոնշյալ նպատակադրումներին և թիրախներին հասնելու համար իրականացվելու են մի շարք միջացառումներ, որոնցից են, օրինակ, մշակող արդյունաբերությունում ISO սերտիֆիկատների ձեռքբերման խրախուսումը, ժամանակակից սարքավորումների ձեռքբերմանը նպաստելու նպատակով ֆինանսական, խորհրդատվական և աջակցության մի շարք այլ գործիքների տրամադրման միջոցով մշակող արդյունաբերության տեխնիկական հագեցվածության բարձրացումը, ածխածնազերծ ապրանքների թողարկման խթանմանն ուղղված միջոցների ձեռնարկումը, արևային էներգետիկայի

[6] ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշման հավելված, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագիր», էջ 29:

ոլորտի հետագա զարգացումն ապահովելու նպատակով քայլերի ձեռնարկումը և այլն:

Հայաստանի ՀՆԱ կառուցվածքում արդյունաբերության մասնաբաժինը տարբեր տարիներին տատանվել է 13-25%-ի շրջանակներում: Ընդ որում վերջինս մեծապես կախված է մշակող արդյունաբերության ոլորտում արձանագրված փոփոխությունների դինամիկայից, քանի որ այն ապահովում է արդյունաբերության ոլորտում ձևավորվող ավելացված արժեքի 55%-ից ավելին: Այս եզրահանգումը, ըստ էության, բնութագրական է դիտարկվող ամբողջ ժամանակահատվածի համար, սակայն առավել ակնհայտ է դառնում հատկապես ՀՆԱ արտադրության մեջ արդյունաբերության ծավալում մշակող արդյունաբերության և հանքագործական արդյունաբերության ու բացահանքերի շահագործման մասնաբաժինների կտրուկ աճի կամ անկման տարիների ուսումնասիրության արդյունքում:

Գծապատկեր 1. Արդյունաբերության և մշակող արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ արտադրության ծավալում[7]:



Այսպես, օրինակ, 2004 թվականին ՀՆԱ արտադրության մեջ արդյունաբերության ծավալում մշակող արդյունաբերության մասնաբաժինը

[7] Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Տվյալների բազաներ, Այլ տվյալների բազաներ, Ազգային հաշիվներ, https://www.armstat.am/am/?nid=202:

կրճատվել է 6.8 տոկոսային կետով, իսկ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման մասնաբաժինը աճել է 8.6 տոկոսով, ինչը, սակայն, էական ազդեցություն չի ունեցել ՀՆԱ արտադրության մեջ արդյունաբերության մասնաբաժնի փոփոխության վրա: Մինչդեռ, օրինակ, 2021 թվականին ՀՆԱ արտադրության մեջ արդյունաբերության ծավալում մշակող արդյունաբերության մասնաբաժինը կրճատվել է 6,1 տոկոսով, իսկ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման մասնաբաժինը աճել է 8,4 տոկոսով, արդյունքում՝ ՀՆԱ արտադրության մեջ արդյունաբերության մասնաբաժինը ավելացել է ընդամենը 0,3 տոկոսով:

Դիտարկվող ողջ ժամանակահատվածի ընթացքում արդյունաբերությունը, և մասնավորապես մշակող արդյունաբերությունը, ՀՆԱ կառուցվածքում ամենափոքր մասնաբաժինն ունեցել են 2008 թվականին՝ կազմելով համապատասխանաբար 13,1 և 8,5 տոկոս: Սա արդյունք էր մի խումբ գործոնների, օրինակ, մշակող արդյունաբերության ենթաճյուղերի, մասնավորապես քիմիական արդյունաբերության, ադամանդագործության և ծխախոտի արտադրության ծավալների կրճատումը: Բացի դրանից՝ արդյունաբերության ճյուղի աճը այդ ողջ ժամանակահատվածում զսպվել է արտահանման անբարենպաստ գնային միջավայրի պատճառով: Ճգնաժամի ընթացքում արդյունաբերության ճյուղը անկում ապրեց՝ հիմնականում պայմանավորված համաշխարհային և ներքին պահանջարկի նվազման արդյունքում սննդամթերքի և շինանյութերի արդյունաբերության կրճատմամբ:

Գծապատկեր 2. Մշակող արդյունաբերության և հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման մասնաբաժինները ՀՆԱ արտադրության մեջ արդյունաբերության ծավալում[8]:

[8] Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Տվյալների բազաներ, Այլ տվյալների բազաներ, Ազգային հաշիվներ, https://www.armstat.am/am/?nid=202:

Խոսելով Հայաստանի Հանրապետության արդյունաբերական զարգացման մասին՝ կարևոր է նշել, որ առանց հայրենական արդյունաբերության կայացման և ժամանակին համապատասխան զարգացման ու արդիականացման պետությունը կանգնելու է օտարերկրյա պետություններից շարունակական կախվածության իրական սպառնալիքին մշտապես դիմագրավելու խնդրի առջև: Այլ կերպ ասած՝ կարևորվում է երկրի տնտեսության իրական վիճակը արտացոլող վիճակագրական ցուցանիշների վրա հիմնված և ապագայում ցանկալի նորարարական արդյունաբերության կայացմանն ուղղված քաղաքականության ուրվագծումը:

2008 թվականի ճգնաժամին անմիջապես նախորդող տարիներին Հայաստանում ձևավորված տնտեսական աճի մոդելը հիմնված էր արտաքին ֆինանսավորման վրա, որի ծավալները տարեցտարի աճում էին: Արդյունքում՝ երկնիշ տնտեսական աճի պայմաններում ներմուծումը առաջանցիկ աճ արձանագրեց, ներքին շուկայում տեղական արդյունաբերական արտադրանքի մրցունակությունը նվազեց, ինչպես նաև կրճատվեց արտահանումը:

Գծապատկեր 3. Արդյունաբերական արտադրանքի ծավալի և աճի դինամիկան[9]:



[9] Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Հրապարակումներ, Տարեգրքեր:

Մյուս կողմից, հայրենական արդյունաբերական արտադրանքի անվանական ծավալը վերջին 21 տարվա ընթացքում աճել է շուրջ 8 անգամ՝ հասնելով 2385.9 մլրդ ՀՀ դրամի: Միաժամանակ, ի տարբերություն վերջին 11 տարվա ընթացքում արդյունաբերական արտադրանքի անվանական ծավալի կայուն աճին, այնուհանդերձ իրական աճի դինամիկան նույն կայունությունը չի ցուցաբերում: Նշվածը ակնհայտ է հատկապես 2011-2014թթ. ընթացքում, երբ արդյունաբերական արտադրանքի անվանական ծավալը դինամիկ աճում է, սակայն իրական աճի տեմպերը էականորեն դանդաղում են:

Գծապատկեր 4. Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման և մշակող արդյունաբերության ծավալը[10]:



Կարևոր է ընդգծել նաև, որ դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման և մշակող արդյունաբերության անվանական ծավալները աճել են համապատասխանաբար 3,6 և 7,7 անգամ:

---

[10] Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Հրապարակումներ, Տարեգրքեր:

Գծապատկեր 5. Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման և մշակող արդյունաբերության աճը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ[11]:



Չնայած հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման անվանական ծավալների այսպիսի էական աճին, այդուհանդերձ այն մեծ ազդեցություն չի ունեցել արդյունաբերական արտադրանքի անվանական ծավալի աճի վրա՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մշակող արդյունաբերությունը տարբեր տարիներին կազմել է արդյունաբերության ծավալի շուրջ 55-70%-ը, իսկ հանքագործական արդյունաբերությունը և բացահանքերի շահագործումը՝ մինչև շուրջ 20%-ը միայն:

Ի տարբերություն հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտում իրական աճի կտրուկ տատանումների՝ մշակող արդյունաբերությունում իրական աճի դինամիկան համեմատաբար համահարթ է և զսպված: Այդուհանդերձ, արդյունաբերության կառուցվածքում ունեցած կշռի տեսանկյունից հարկ է նշել, որ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման տեսակարար կշիռն արդյունաբերության մեջ մոտեցել է 20%-ին մինչ 2008 թվականի ճգնաժամը և 2016 թվականից սկսած, հատկապես՝ 2018 թվականից մինչ այժմ այն դինամիկ մեծանում է՝ վերջին 2 տարիներին արձանագրելով վերջին 21 տարիների ամենամեծ ցուցանիշները:

[11] Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Հրապարակումներ, Տարեգրքեր:

Գծապատկեր 6. Արդյունաբերական ճյուղերի տեսակարար կշիռը արդյունաբերության մեջ[12]:



2000-2020 թվականների ընթացքում արդյունաբերության ոլորտում տնտեսավարողների քանակը ավելացել է շուրջ 2.6 անգամ՝ հասնելով 3253-ի, իսկ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտում 2009-2020 թվականների ընթացքում այն գրեթե կրկնապատկվել է՝ հասնելով 120-ի:

[12] Հաշվարկվել է Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:

Գծապատկեր 7. Տնտեսավարող սուբյեկտների քանակը արդյունաբերության, մշակող արդյունաբերության, հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման մեջ[13]:



Թեև մշակող արդյունաբերության տնտեսվարող սուբյեկտների քանակը դիտարկվող ժամանակահատվածում էական փոփոխության չի ենթարկվել, այդուհանդերձ ամբողջ արդյունաբերության տնտեսավարողների շուրջ 87-90%-ը գործում են հենց մշակող արդյունաբերության ոլորտում:

2000-2017 թվականների ընթացքում արդյունաբերության արտադրողականությունը աճել է շուրջ 8,1 անգամ, սակայն 2018-2020 թվականներին սկսել է նվազել՝ կապված մշակող արդյունաբերության արտադրողականության կրճատման հետ: Մյուս կողմից, 2009-2017 թվականներին շուրջ 2,6 անգամ աճել է և՛ արդյունաբերության, և՛ մշակող արդյունաբերության արտադրողականությունը:

[13] Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Հրապարակումներ, Տարեգրքեր:

Գծապատկեր 8. Արտադրողականությունը արդյունաբերության, մշակող արդյունաբերության, հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման մեջ[14]:



Կարևոր է ընդգծել, որ արդյունաբերությունում աշխատատեղերի ընդլայնումը անհրաժեշտ է ապահովել գերազանցապես որակյալ աշխատատեղերի ստեղծման հաշվին, որոնք կբնութագրվեն միջինից բարձր արտադրողականությամբ և աշխատավարձերով:

Վերոնշյալից կարող ենք եզրահանգել, որ դեռևս խորհրդային շրջանից արդյունաբերական որոշակի ավանդույթներ և հիմքեր ունեցող Հայաստանում արդյունաբերության ոլորտը շարունակում է լինել համախառն ներքին արդյունքի արտադրության մեծ մասն ապահովող ճյուղերից մեկը: Մյուս կողմից արդյունաբերության ոլորտում գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտների էական մասը գործում են հենց մշակող արդյունաբերության ոլորտում, և արդյունաբերական արտադրանքի արտադրության գերակշիռ մասն ապահովվում է մշակող արդյունաբերության կողմից՝ չնայած այն հանգամանքին, որ վերջին չորս տարիների ընթացքում հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման տեսակարար կշիռն արդյունաբերության մեջ դինամիկ աճում է: Կարևոր է ընդգծել, որ նշված արդյունքում արդյունաբերության ոլորտում աճը կամ նվազումը, ինչպես նաև արդյունաբերության արտադրողականության աճը կամ նվազումը

[14] Հաշվարկվել է Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա: Ընդ որում ենթաճյուղերի արտադրողականությունը հաշվարկվել է՝սկսած 2009 թվականից՝ նախորդ տարիներին աշխատողների միջին տարեկան թվաքանակի ցուցանիշի բացակայության պատճառով:

մեծապես կախված է հենց մշակող արդյունաբերության ոլորտի դինամիկայից:

Օգտագործված գրականության ցանկ

1.ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի նիստի N 49 արձանագրային որոշմամամբ հաստատված հավելված «Հայաստանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն»:

2. ՀՀ էկոնոմիկայի նախարարի 24.02.2020թ. N278-Ա հրաման «Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների ցանկը, բյուջեն և կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի մասնակցության աջակցության ենթակա համաֆինանսավորվող ծախսերի տրամադրման կարգը հաստատելու մասին», ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջ՝ https://www.mineconomy.am/edia/10862/hraman%20278.pdf:

3. «Արդյունաբերության քաղաքականության ռազմավարությանը եվ միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, https://www.e-draft.am/projects/2237:

4. ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշման հավելված, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագիր», https://www.gov.am/files/docs/4586.pdf:

5. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կայքէջ, տվյալների բազաներ, հրապարակումներ, տարեգրքեր https://www.armstat.am/am/

THE ROLE OF MANUFACTURING IN ARMENIAN ECONOMY

GEVORGYAN KORYUN
GSU Lecturer
Postgraduate at the Chair of Management and Finance, GSU
e-mail: kor.gevorgyan@gmail.com

Industry in Armenia has traditionally been one of the most important sectors of economy. Industry is a sector of economy, the state of which, since the day Armenia

gained independence, has worried both the government of that period and the people. However, it is clear that the policy of turning Armenia into an industry oriented country requires the implementation of modern management models, systems for applying innovative results through the use of modern, competitive technologies, as well as the constant development of human capital.

Therefore, one of the main goals of all governments that were formed in the Republic of Armenia in different periods was the development of a clear industrial policy and the necessary tools, focusing on the development of manufacturing industries and complexes. In this regard, in 2009, a draft concept of the industrial development of the Republic of Armenia was developed, which defines the goals, objectives and priorities of the industrial development of the RA, the implementation of which is aimed at creating prerequisites for further development of the Republic industry, by integrating it into the world industry, and also promoting the production of competitive products that meet the modern requirements of the domestic and foreign markets.

In addition, based on the goals of increasing the competitiveness of the economy and ensuring continuous inclusive economic growth, an export-oriented industrial policy of the Republic of Armenia was formed.

Keywords: *Gross Domestic Product (GDP), industry, manufacturing, mining and quarrying, growth, structure, number of economic entities, productivity.*

РОЛЬ ОБРАБАТЫВАЮЩЕЙ ПРОМЫШЛЕННОСТИ В ЭКОНОМИКЕ АРМЕНИИ

ГЕВОРКЯН КОРЮН
Преподаватель ГГУ,
Аспирант кафедры менеджмента и финансов ГГУ
электронная почта: kor.gevorgyan@gmail.com

Промышленность в Армении традиционно была одной из важнейших отраслей экономики. Промышленность – это сектор экономики, состояние которого со дня обретения Арменией независимости беспокоило как правительство того периода, так и народ. Однако совершенно очевидно, что политика превращения Армении в индустриально ориентированную страну требует внедрения современных моделей управления, систем применения инновационных результатов по средствам использования современных,

конкурентоспособных технологий, а также постоянного развития человеческого капитала.

Поэтому одной из основных целей всех правительств, формировавшихся в Республике Армения в разные периоды, была разработка четкой промышленной политики и необходимых инструментов, ориентируясь на развитие обрабатывающих производств и комплексов. В связи с этим в 2009г. был разработан проект концепции промышленного развития Республики Армения, в котором определены цели, задачи и приоритеты промышленного развития Республики Армения, реализация которых направлена на создание предпосылок для дальнейшего развития промышленности республики, путем интеграции ее в мировую промышленность, а также содействие производству конкурентоспособной продукции, отвечающей современным требованиям внутреннего и внешнего рынков.

Кроме того, исходя из целей повышения конкурентоспособности экономики и обеспечения непрерывного инклюзивного экономического роста, была сформирована экспортоориентированная промышленная политика Республики Армения.

Ключевые слова: *валовой внутренний продукт (ВВП), промышленность, обрабатывающая промышленность, горнодобывающая промышленность и разработка открытых карьеров, прирост, структура, количество хозяйствующих субъектов, производительность.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 09.03.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 18.03.2022թ.: